Մանկական ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգ

Բանկային ավանդների ներգրավման մասին ՀՀ օրենքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ -ի կողմից ֆիզիկական անձանցից ընդունվող Մանկական ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը հետևյալն է.
Մանկական ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝

$$\mathbf{APY = (1 + r / 2)^2 - 1}, \text{ Որտեղ՝}$$

APY – Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունն է (APY – Annual Percentage Yield)՝ ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը ավանդատուի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:

r – Տարեկան պարզ տոկոսադրույքն է (r – Annual Rate of Simple Interest)՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքն է, որի հիման վրա Բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:

2 – Մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է՝ ցույց է տալիս, թե մեկ տարվա ընթացքում քանի անգամ է կատարվում ավանդի գումարին տոկոսագումարների ուղղակի մուտքագրումը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ -ի կողմից Մանկական ավանդի հետ կապված պարտադիր վճարներ սահմանված չեն:

Օգտվելով վերոհիշյալ բանաձևից՝ հաշվարկենք Բանկի կողմից ընդունվող բոլոր տեսակի արժույթներով Մանկական ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը.

Օրինակ թիվ 1
Ներդրվող արժույթը՝ ՀՀ դրամ
Ներդրվող գումարը՝ 100,000
Ներդրման տարեկան պարզ տոկոսադրույքը՝ 7%
Հաշվարկման ժամկետը՝ 1 տարի (365 օր)
Տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունը՝ 2 (յուրաքանչյուր տարվա հունվար և հուլիս ամիսների 10-ին)

$$\mathbf{APY = (1 + r / 2)^2 - 1 = (1 + 7.0\% / 2)^2 - 1 = 7.12\%}$$

Օրինակ թիվ 2
Ներդրվող արժույթը՝ ԱՄՆ դոլար
Ներդրվող գումարը՝ 2,000
Ներդրման տարեկան պարզ տոկոսադրույքը՝ 5%
Հաշվարկման ժամկետը՝ 1 տարի (365 օր)
Տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունը՝ 2 (յուրաքանչյուր տարվա հունվար և հուլիս ամիսների 10-ին)

$$\mathbf{APY = (1 + r / 2)^2 - 1 = (1 + 5\% / 2)^2 - 1 = 5.06\%}$$